

ՍՍՀՄ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԿՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՎԼԱԴԻՄԻՐ ԿՈՒՐՈՅԵԴՈՎԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԾՆՆԴՅԱՆ 75-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԳԼՈՒԽ, ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ, ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԱՉԳԵՆ ԱՌԱՋԻՆ

ՍՍՀՄ Մինիստրների խորհրդին առընթեր կրոնական գործերի խորհրդի և ինձանից իմ անունից սրտանց շնորհավորում եմ Ձեզ Ձեր նշանակալի տարեթվի՝ ծննդյան 75-ամյակի առթիվ:

Հանդիսանալով նշանավոր կրոնական գործիչ՝ Դուք շատ ժամանակ եք տրամադրում ժողովուրդների միջև բարեկամության և վստահության ամրապնդման գործին, միջուկային սպառնալիքի դեմ պայքարին, հանուն կյանքի և խաղաղության մեր մոլորակում:

Շատ արդյունավետ է այն աշխատանքը, որը Դուք կատարում եք աշխարհով մեկ ցրված հայությանը դաստիարակելու սիրո և հարգանքի ոգով դեպի իրենց մայր հայրենիք Հայաստանը:

Ձեր հայրենասիրական և խաղաղասիրական գործունեությունը բարձր է գնահատվում սովետական կառավարության և սովետական հասարակայնության կողմից: Դրա նոր վկայությունն է Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության պատվոգրով Ձեր պարգևատրումը:

Մենք ցանկանում ենք Ձեզ, մեծահարգ կաթողիկոս, քաջառողջություն, բարօրություն և նոր բեղմնավոր հաջողություններ Ձեր ակնիվ գործունեության մեջ:

ՎԼԱԴԻՄԻՐ ԿՈՒՐՈՅԵԴՈՎ
ՍՍՀՄ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ԿՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Մոսկվա,
20 սեպտեմբեր 1983 թ.